ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՄԵԼԻՔԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող ՀԶՀԾ կառավարման հանձնաշողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Դերենիկ Շահբազյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու ._____. որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ՄԵԼԻՔԳՅՈՒՂ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 7
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 9
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 12
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 13
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 15
4. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 16
4.1. Համայնքի զարգացման տեսլական 16
5.1. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 19
6. ՀՀԶԾ ֆինանսավորում 20
7. ՀՀԶԾ մոնիթորինգ 21
8. Եզրափակում 21
Հավելված 0

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ

Ծրագրի նկարագրություն

ՀՀԶԾ-ի 1-ին բաժնում - Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք՝ ներկայացվում է համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար, զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները, համայնքի հիմնական պրոբլեմները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները, ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը և դրա մասնակցային բնույթը:

ՀՀԶԾ-ի 2-ին բաժնում - Համայնքի իրավիճակի նկարագրություն՝ ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը:

ՀՀԶԾ-ի 3-րդ բաժնում - Նպատակների սահմանում և գործողությունների պլանավարում՝ սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և սույն ՀՀԶԾ-ի հիմնական նպատակները: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԶԾ-ի 4-րդ բաժնում - ՀՀԶԾ ֆինանսավորում՝ ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀՀԶԾ-ի 5-րդ բաժնում - ՀՀԾԶ մոնիթորինգ՝ ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՀԶԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀՀԶԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Մելիքգյուղ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Մելիքգյուղ համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով , այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը,հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

❖ **Համայնքում առկա հիմնախնդիրները**

- Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /40%-50%/
- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Փոքր հողակտորների և ոչ ճիշտ օգտագործվող հողեր
- Արոտավայրերի ճանապարհների անմխիթար վիճակ,բացակայություն
- Աշխատատեղերի բացակայություն
- ԳԵՆ պլանի բացակայություն
- Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում
- Ոռոգման ժամանակաշրջանում համայնքում ոռոգման ջուրը անբավարար է մատակարարվում և միշտ դժգոհություններ են լինում: Անհրաժեշտ է վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:

❖ **Համայնքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝**

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- համայնքի աղբավայրում իրականացնել ցանկապատման աշխատանքներ,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավարություն,
- գյուղմթերքների վաճառքի համար կառուցել փակ շուկա,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար,
- վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը, բարելավել և ընդարձակել ոռոգման համակարգը,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

❖ **Լուծման ուղիները**

- Օրենքների փոփոխություններ
- Լրացուցիչ ֆինանասական միջոցների ներգրավում
- Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում
- Աշխատատողերի ստեղծում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Հանրային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել ինչպես նախկինում Ձեր քննարկմանն ու հավանությանն արժանացած իմ նախընտրական ծրագիրը, այնպես էլ պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

Մելիքգյուղ համայնքի տեսլականը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղ գյուղական համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Մելիքգյուղն ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, մարդիկ ապահովված են աշխատանքով և համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավար **Դերենիկ Շահբազյան**

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Մելիքգյուղ համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում, Ապարանից մոտ 20 կմ հյուսիս-արեւելք: մակերեսը կազմում է՝ 28.95կմ^2: Մարզկենտրոնից գտնվում է 40 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Մելիք, Մելիքի գյուղ, Մելիքյանդի, Մելիքենդ անվանումները: Մելիքգյուղ է վերանվանվել 1946 թ-ին:

Համայնքի տարածքում է գտնվում ս. Հովհաննես եկեղեցին՝ կառուցված 19-րդ դարում:

Համայնքը տեղադրված է Ծաղկունյաց լեռների հարավային լանջերին: Գտնվում է ծովի մակարդակից 2080 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-15-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 1280 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 52%, կանայք՝ 48%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 33%, աշխատունակ ները՝ 54%, հետաշխատունակները՝ 13%: Համայնքում առկա է 362 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Պահուստային հողերից արոտավայրերը զբաղեցնում են 1019 հա, մոտ 90 հա՝ վարելահողեր, խոտհարքեր՝ 70հա: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Ունի արդյունաբերական ձեռնարկություն, որը զբաղվում է բնական ադամանդի վերամշակմամբ,ունի բազմամետաղային օգտակար հանածոներ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեվորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Գծապատկեր1. Համայնքի ազգաբնակչության փոփոխությունը.



Մելիքգյուղ համայնքի մշտական բնակչության թիվը կազմում է **1280** մարդ, այդ թվում տղամարդիկ՝ **660** կամ **(52%)** և կանայք՝ **620 (48%),** ազգաբնակչության **89%**-ը հայ են:

Գծապատկեր 2. Համայնքի մշտական բնակչության սեռատարիքային կազմը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ



Աղյուսակ1. Բնակչության տարիքային կազմը

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝	Արական	Իգական	Ընդամենը
Մինչև 1 տարեկան բնակչության թվաքանակը	7	4	11
1-2 տարեկան բնակչության թվաքանակը	7	5	12
3-4 տարեկան բնակչության թվաքանակը	13	10	23
5-6 տարեկան բնակչության թվաքանակը	14	11	25
Մինչև 6 տարեկան բնակչության թվաքանակը	**41**	**30**	**71**
7-10 տարեկան բնակչության թվաքանակը	32	26	58
11-14 տարեկան բնակչության թվաքանակը	28	30	58
15-17 տարեկան բնակչության թվաքանակը	28	30	58

Մինչև 16 տարեկան բնակչության թվաքանակը	**129**	**116**	**245**
Մինչև 18 տարեկան բնակչության թվաքանակը	**170**	**146**	**316**
18-22 տարեկան բնակչության թվաքանակը	105	86	191
23-45 տարեկան բնակչության թվաքանակը	224	212	436
46-62 տարեկան բնակչության թվաքանակը	128	96	224
63 և ավելի տարեկան բնակչության թվաքանակը	43	59	102

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 39 141,1 հազ.դրամ 2016թ.-ի դրությամբ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 14,23%, որը հիմնականում ձևավորվում է բնակավայրերի հողային և գույքային հարկերից:

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները

Համայնք	**Արտադրանք**	**Ծավալը (տարեկան) տոննա**
Մելիքգյուղ	Կարտոֆիլ	25
	Ցորեն	15
	Գարի	12

Ձեռնարկություններ

Համայնքի տարածքում գործում են 9 ձեռնարկություններ, այդ թվում՝, 6 մանրածախ առևտրի օբյեկտ, 1 ավտոգազալիցքավորման կայաններ, 1 բենզալցման կայան, 1 ավտոմեքենաների տեխսպասարկման կայաններ, որոնցում զբաղվածների թիվը կազմում է մոտ 15 հոգի:

Կրթական հաստատություններ

Անվանում	**Սովորողների թիվ**	**Աշխատողների թիվ**
Մելիքգյուղի միջնակարգ դպրոց	**245**	**27**

Առողջապահական հիմնարկներ

Անվանում	Տեսակ	Քանի հոգու համար է նախատեսված	Տարեկան այցելուների թիվը
Մելիքգյուղի	**ԲՄԿ**	**1280**	**3060**

Աղյուսակ2. Բնակչության սոցիալական կազմ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝	Արական	Իգական	Ընդամենը
Հաշմանդամ անձանց թվաքանակը	30	47	77
Հաշմանդամ երեխաների թվաքանակը	3	2	5
Միակողմանի ծնողազուրկ երեխաների թվաքանակը	3	2	5
Կենսաթոշակառուների թվաքանակը	**43**	**59**	**102**
Տարեց կենսաթոշակառուների թվաքանակը (75 տարեկան և բարձր)	22	15	37
3 և ավելի երեխաներ /0-18 տարեկան/ ունեցող տնային տնտեսությունների քանակը			35
Միայն կենսաթոշակառուներից /63 և ավելի/ կազմված տնային տնտեսությունների քանակը			18
Հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսությունների քանակը			3
Մինչև 6 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսություններ			71
Աշակերտների թվաքանակը			**245**
Մինչև 16 տարեկան			150
16 և ավելի տարեկան			95
Ուսանողների թվաքանակը			**19**
Զինված ուժերում ծառայողների թվաքանակը			31
Պայմանագրային հիմունքներով			6
Պարտադիր զինվորական ծառայություն			25
Զբաղվածություն չունեցող աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակը (16 և ավել տարեկան)			71
Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թվաքանակը			**99**
Ռուսաստանի Դաշնություն			69
ԱՊՀ այլ երկիր			19
Այլ			11

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

- համայնք -պետություն համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից համայնքում իրականացվել է ջրարբիացում,իսկ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է նաև գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրեր և գյուղատնտեսական տարբեր միջոցառումներ:
- հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման ,պահպանման և բարելավվման ընդհանուր աշխատանքներ:
- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի տրամադրում՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակընկալում է ոռոգման համակարգի վերանորոգում և բարելավվում ,մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի վերանորոգում:Նշված հարցերի կարգավորման հետ միասին կբարձրանա , և՛ համայնքի սոցիալական վիճակը ,և՛ դրական փոփոխություն կլինի մշակութային կյանքում:
- տեղացի բարերարների կողմից նախատեսվում է իրականացվող ծրագրերի շուրջ գյուղի սրբատեղի կառուցման ծրագիր,ինչը կամրապնդի հավատքի և համայնքի միասնության ամբողջականությանը:
- համայնքի վարչական տարածքում մասնավոր անձանց և ընկերությունների կողմից նախատեսվում է ներդնել գյուղ արտադրանքի(կաթ, միս, բանջարեղեն և այլն) վերամշակման արտադրամասեր, ինչպես նաև տրիկոտաժի փոքր ձեռնարկություն(առկա է համապատասխան տարածք և աշխատուժ):

Պետության հետ համագործակցության շրջանակներում՝ ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող գյուղ. տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը էականորեն դրական ազդեցություն կարող են ունենալ հողատարածքների արդյունավետ մշակման , որն էլ կարող է բերել անասնագլխաքանակի և գյուղմթերքների արտադրանքի ավելացմանը:

1 « ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ »

1. **Ծրագրի նպատակը** – Նախատեսվում է՝ վերանորոգել ներհամայնքային ճանապարհները, բարեկարգել համայնքի փողոցային ճանապարհային հատվածները

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Կբարելավվի երթևեկությունը նշված ճանապարհահատվածներում, կտեղադրվի երթևեկության և ճանապարհային նշաններ

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ - ___3մլն.___ դրամ

բ) այլ՝ ___15 մլն.___ դրամ

2 « ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ»

1. **Ծրագրի նպատակը** – Ապահովել, երեկոյան ժամերին, համայնքի բնակիչների և տրանսպորտի անվտանգ երթևեկությունը, համայնքը դարձնել լուսավոր և գրավիչ զբոսաշրջության համար

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Ծրագրի արդյունքում կունենանք լուսավոր համայնք, որը կնպաստի մեր բնակիչների անվտանգ երթևեկությանը:

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – հյուրեր և համայնքի բնակիչներ

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – __1,5մլն____ դրամ

բ) այլ՝ __2.0մլն.___ դրամ

3 «ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ»

1. **Ծրագրի նպատակը** –կոմունալ աշխատանքների արդյունավետ իրականացում, փողոցների հաճախակի մաքրում փոշուց և ձյան շերտից,

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – մաքուր և գրավիչ համայնք

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – հյուրեր և համայնքի բնակիչներ

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___1մլն._____ դրամ

բ) այլ՝ __15մլն_____ դրամ

4 «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ»

1. **Ծրագրի նպատակը** – Նախատեսվում է համայնքի տարածքում կառոցել 15-ից 16 աղբահարթակներ, որոնցում տեղադրվել աղբամաններ: Շաբաթօրյակների միջոցով համայնքի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում:Հսկողության իրականացում շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու համար:

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – մաքուր և գրավիչ համայնք

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – հյուրեր և համայնքի բնակիչներ

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___3մլն._____ դրամ

բ) այլ՝ __3մլն._____ դրամ

5 «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՅՔՈՒՄ»

1. **Ծրագրի նպատակը** – Համայնքը ունի գեղատեսիլ վայրեր, կան շահագրգիռ կազմակերպություններ և անհատներ որոնք ցանկանում են ներդրումներ կատարել և կառուցել հանգստյան գոտիներ,առևտրի կետեր հարակից տարածքներում: Նախատեսվում է նաև կազմակերպել տոնավաճառներ բնակչության ձեռագործ աշխատանքների և գյուղ մթերքների վաճառքի համար: Տուրիզմի աստիճանական զարգացման

ընթացքում բնակչության կողմից տնային տնտեսություններին կից միկրոհյուրանոցային կառույցերի ստեղծում և հյուրերի համար բավարար պայմանների ստեղծում:

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – մաքուր և գրավիչ համայնք

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – Համայնքի բնակչություն ,առևտրի կետեր,անհատ ձեռնարկատերեր,համայնքի բյուջե

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___ 2մլն. _____ դրամ

բ) այլ՝ __ 40մլն. _____ դրամ

6 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ»

1. **Ծրագրի նպատակը** – Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում: 50հա հողատարածք ոռոգման ջրով մատակարարման համար ոռոգման 1000մետր ջրագծի վերանորոգում:

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – Համայնքի բնակչություն , համայնքի բյուջե

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___ 2մլն. _____ դրամ

բ) այլ՝ __ 10մլն. _____ դրամ

7 «ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1. **Ծրագրի նպատակը** – Նախատեսվում է համայնքի տնային տնտեսություններին մատակարարվող խմելու ջրի ջրագծերի մասնակի վերանորոգում, մատակարարման համար խմելու ջրի 1000մետր ջրագծի մասնակի վերանորոգում:

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Բնակչությանը սպասարկել էկոլոգիապես մաքուր ջուր, ապահովել ջրագծերի պահպանությունն ու շահագործումը

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – Համայնքի բնակչություն

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___ 2մլն. _____ դրամ

բ) այլ՝ __ 10մլն. _____ դրամ

8 « ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ »

1. **Ծրագրի նպատակը** – Նախատեսվում է համայնքի և դոնոր կազմակերպության միջոցներով Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում, Մշակույթի տան վերանորոգում և կահավորում, ապահովել մշակութային միջոցառումներ:

2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – Բնակչությանը ապահովել մշակութային միջոցառումներ կազմակերպելու հնարավորությամբ:

3. **Ծրագրի հիմնական շահառուները** – Համայնքի բնակչություն

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – ___ 10 մլն. _____ դրամ

բ) այլ՝ __ 15 մլն. _____ դրամ

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի եկամուտները ձվավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին չի ակնկալվում կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի և տուրքերի և մեծամասամբ ֆինանական համահարթեցման դոտացիաների հաշվին: Շատ ցածր է համայնքի ֆինանսական անկախության մակարդակը (աղյուսակ):

Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք գրեթե չեն աճում: Այդ պատճառով, թեև տեսականորեն պետք է հաջորդ տարիների եկամուտների կանխատեսման ժամանակ եկամուտների որոշակի աճ նախատեսվեր, սակայն սեփական եկամուտների մասով դա չի արվել՝ իրատեսական լինելու նպատակով: Եկամուտների աճ նապատեսվել է միայն ֆինանսական համահարթեցման դոտացիաների մասով:

Աղյուսակ3. Եկամուտների ֆինանասական կանխատեսումները

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	39 186,6	39 781,6	40 376,6	40 971,6	41 566,6	42 161,6
1.	Հողի հարկ	3 171,0	3 256,0	3 341,0	3 426,0	3 511,0	3 596,0
2.	Գույքահարկ	2 268,1	2 353,1	2 438,1	2 523,1	2 608,1	2 693,1
3.	Վարձավճար	61,0	146,0	231,0	316,0	401,0	486,0
4.	Տեղ. տուրք	21,0	106,0	191,0	276,0	361,0	446,0
5.	Այլ եկամուտներ	20,0	105,0	190,0	275,0	360,0	445,0
6.	Մուտքեր հողի օտարումից	35,0	120,0	205,0	290,0	375,0	460,0
7.	Ընդամենը սեփ. եկամուտներ	5 576,1	6 086,1	6 596,1	7 106,1	7 616,1	8 126,1
8.	Դոտացիա	33 610,5	33 695,5	33 780,5	33 865,5	33 950,5	34 035,5

Գծապատկեր3. Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 2016թ.



2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Այս ենթաբաժնում մանրամասն պետք է նկարագրվեն համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարությունները: Պետք է դիտարկվեն զարգացման առնվազն հետևյալ ուղղություններում առկա դժվարությունները.

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչնդոտող գործոններն են ֆինանսի բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները,գիտելիքների պակասը:

2) համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչնդոտը գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը , ֆինանսի պակասը , բնակչության մոտ գիտելիքների պակասը:

3) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման խոչնդոտներից են՝ շենքի ձեռք բերման խնդիրը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով, ինչպես նաև համապատասխան գույքի ձեռք բերման ֆինանսական խնդիրները:

4) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչնդոտ է աշխատատեղերի պակասը, սեզոնային զբաղվածության արտադրամասերի բացակայությունը, սոցիալական օգնության ֆինանսի սակավությունը , լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը :

6) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

7) համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչնդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:,

8) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,խնդրի խոչնդոտներից են աղբամանների ,աղբահարթակների,աղբավայրի և աղբատար մեքենայի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

9) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը- այս բնագավառում՝ ներհամայնքային տրանսպորտի ներդնումը տնտեսապես ձեռնտու չէ,իսկ ճանապարհների և ենթակառույցներ պահպանման և ժահագործման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

10) պետության պաշտպանության իրականացման աջակցումը,այս խնդրի լուծման համար կարևոր խոչնդոտ է հայրենասիրական,պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

11) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,խնդրի խոչնդոտներից են շենքերի և շինությունների ոչսեյսմակայուն լինելը,պարզագույն թաքստոցների և քաղաքացիների անահատական պաշտպանության միջոցների բացակայությունը,ազդանշանային սարքերի բացակայությունը:

12) գյուղատնտեսության զարգացման խթանումը,-կարեոր խոչդոտ է ոռոգման ջրագծի և ջրի բացակայությունը, գյուղատնտեսական տեղնիկայի բարձր% կազմող մաշվածությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը,արոտներներում ջրի, մակատեղերի, ծածկոցների և ճանապարհների բացակայությունը:

13) համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչնդոտ է գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը:

14) զբոսաշրջության զարգացման խթանման խոչնդոտ է գովազդների բացակայությունը,այդ բնագավառում բնակչության գիտելիքների պակասը,հանգստյան գոտիների և գյուղական մինի հյուրանոցների կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը :

15) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայության հետ:

16) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչնդոտներից են բնակչության սոցիալական վիճակը,աշխատատեղերի բացակայությունը,բազմանդամ ընտանիքների հանդեպ հոգածության ցածր մակարդակը,բնակչության մոտ կա մտահոգություն երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու հարցում:

17) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը- այս խնդրի իրականացման խոչնդոտ է բուժկետի շենքի բացակայությունը, մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

18) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

19) համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

20) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման,արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնեու խնդրի հետ , ինչպես նաև բարեգործությունների լայն լուսաբանման բացակայության հետ:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

3. Աղյուսակ4. Համայնքի զարգացման ՈՒԹԿՀՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Գյուղի աշխարհագրական դիրքը 2.Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները 3.Հին գյուղի գրավիչ ճարտարապետական տեսքը 4.Տուրիզմի զարգացման հնարավորությունները 5.Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը 6.Հասանելի է բջջային կապի 3 օպերատորները	1.Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը 2.Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում 3.Կոմունիկացիոն ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, մասնավորապես խմելու ջրացանցի մասնակի, համայնքի ոռոգման համակարգի և կոյուղացանցի վատթար վիճակը 4.Բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը 5.Փողոցների ոչ բարվոք վիճակը 6.Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը 7.Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայություն 8.Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ 9.Կենտրոնացված կոյուղու բացակայություն
Հնարավորություններ	**Վտանգներ**
1.Աշխատուժի առկայություն 2.Տուրիզմի զարգացման համար գեղատեսիլ տարածքի առկայություն, պատմական և մշակութային վայրերի առկայություն, շահագրգիռ ձեռներեցների նախաձեռնություններ: 3.Գյուղմթերքների վերամշակման և այգեգործական մրգերի փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը 4.Կոոպերատիվների ստեղծում	1.Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, սողանքների առաջացում) 2.Գործազրկության մակարդակի աճը 3.Բնակֆոնդի վիճակի վատթարացումը 4.Բնակչության աճի ցածր տեմպ 5.Արտագաղթը

5.Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը	

Համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է գյուղի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, գյուղի տարածքում կարող է բնակվել առավելագույնը մոտ 3.5 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Մելիքգյուղ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների եւ գործարարների համատեղ գործունեությունը:

4. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

4.1. Համայնքի զարգացման տեսլական

5. **Գծապատկեր4. ՀՀԶԾ նպատակների, և գործողությունների սահմանման, անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման հերթականությունը**



Մելիքգյուղ համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում ,որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման,քարի վերամշակման, չրերի արտադրության,խմելու ջրի և գյուղ.մթերքների պահածոյացման փոքր և միջին ձեռնարկություններ:

2. Իրականացնել ծրագրեր ուղղված զբոսաշրջության զարգացմանը,որի ընթացքում նախատեսվում է համայնքում կառուցել հանգստյան գոտիներ,տնային տնտեսություններին կից հյուրանոցային տիպի շինությունների կառուցում,նոր առևտրի կետերիվերաբացում:
3. Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, մեքենատրակտորային կենտրոնացված կայանի ստեղծում, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ձեռք բերում, վարի տրակտոր և այլ գյուղտեխնիկաներ և գործիքներ: Նախատեսվում է նաև վերականգնել ոռոգման ջրագծեր,որոնց արդյունքում ոռոգման ջրով անխափան կապահովվի 50-ից 60հա հողատարածք:Նախատեսվում է նաև արոտների ճանապարհներ կառուցում,արոտատեղերում մակատեղերի,կացարանների և ծածկոցների կառուցում:
4. Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավա-կությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին:Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նորաստեղծ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տամադրում:
5. Նախատեսվում է համայնքում պարբերական և հաստատուն աղբահանության իրականցում: Դրա համար նախատեսվում է համայնքում կառուցել 15-ից 16 աղբահարթակներ, որոնցում կտեղադրվեն աղբամաններ: Նախատեսվում է նաև աղբատար մեքենայի ձեռք բերում և աղբի պարբերական հեռացում աղբամամաններից :
6. Համանքի ճանապարհների և ենթակառույցների մասով նախատեսվում է որոշ փողոցների ասֆալտապատում /2000-ից 3000քառմ/ , որոշ մասի շեբենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:
7. Երիտասաևդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միոցառումների կազմակերպում ,ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում:
8. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ,մասնավորապես համայնքային հողերի , շենքերի ու շինությունների,տեխնիկայի ,սարքավորումների վարձականությամբ տրամադելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում ՝ հասարակական և արտադրական կառույցների համար,ինչպես նաև առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:
9. Համանքի բնակավարի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, շենքերի և շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ,փողոցների մաքրման աշխատանքներ;
10. Համանքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տրամադրում, ցածր տոկոսներով երկարատև վարկերի տրամադրում , օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:

11. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների , սպորտլանդիաների անցկացում, սպորտային առանձին խմբակների ստեղծում,միջհամայնքային մրցումների անցկացում:
12. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման համար նախատեսվում է բուժկետի շենքի ձեռք բերում,սարքավորումներով և գույքով ապահովում,ծրագրային կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում և համայնքի բնակչության առողջության պարբերական ստուգման աշխատանքներ բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:
13. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկա-պարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ, նոր գույքի և սարքավորումների ձեռք բերում, մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
14. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսում է՝դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
15. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում, զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
16. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված, սական սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների տեսքով, գույքի տեսքով ևայլն/:
17. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն «Խարիխս», կազմակերպության հետ, համանդամների ընդգրկել զանազան հանձնաժողովների ևխմբերի մեջ: Ստեղծել պայմաններ նրան ազատ տեղաշարժի համար/ սայլուղիներ կառուցում և այլն:
18. Անհրաժեշտ է վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:
19. Բարեգործության խթանաման բանագավառում նախատեսվում է արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարպերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ, ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

5.1. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը, իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային գույքի `մշակույթի տան սան հանգոյցի վերանորոգմանը և մշտական հոսող ջրով ապահովմանը :

2.Ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը- վերանորոգված խաղասենյակի առկայությունը կնպաստի գիտելիքների ավելացմանը, հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքային մտածողության բարձրացմանը:

3. Համայնքի ճանապարհների պահպանման և շահագործման ծրագրերի արդյունքում կունենանք 300քառ.մետր ասֆալտապատ փողոց, 3000 քառ.մետր բարեկարգ շեբենապատված ճանապարհ,1000մետր վերանորոգված ջրհեռացման առու, մաքուր և գրավիչ համայնք ` բնակվողների և զբոսաշրջիկների համար:

4.Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:

5.Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն գյուղ մթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման , բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 50 տոկոս:

6.Զբոսաշրջության ծրագրերի նպատակն է բնակիչների սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավումը՝ նախատեսվում է եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ 15-ից 60 տոկոսի չափով:

7. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 20-ից 60 կետով, ժամանակակից ենթակառույցներով և շինություններով մաքուր՝ աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:

8. Անհրաժեշտ է վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:

Հավելված /Գծապատկեր 5./

6. ՀՀԶԾ ֆինանսավորում

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. Զբոսաշրջության զարգացման խթանումը Մելիքգյուղ համայնքում–անհատ ձեռնարկատերերի, կազմակերպությունների և բնակիչների ֆինանսական միջոցների հաշվին
2.Աղբահանության կազմակերպումը համայնքում–իրականացվում է Ուրբան կազմակերպության միջոցով՝ համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և համայնքի ներդրումներով:
3.Փողոցային լուսավորություն –իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով
4.Գյուղատնտեսության զարգացման խթանումը համայնքում-տեխնիկայի ձեռք բերում – իրականացվում է միջազգային կազմակերպության և համայնքի կողմից 5% ներդրմամբ գոյացած ֆիննանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:
5.Գյուղատնտեսության զարգացման խթանումը Մելիքգյուղ համայնքում-արոտների բարելավում - իրականացվում է միջազգային կազմակերպության և համայնքի կողմից 5%ներդրմամբ գոյացած ֆիննանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:
6.Գյուղատնտեսության զարգացման խթանումը Մելիքգյուղ համայնքում-ոռոգման ջրագծի վերանորոգում- իրականացվում է միջազգային կազմակերպության և համայնքի կողմից 5% ներդրմամբ գոյացած ֆիննանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:
8.Սան.հանգույցի վերանորոգում-իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով
9. Մշակույթի տան երկու սենյակների և խաղասենյակի վերանորոգում - իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով
10. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում-իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով:

Համայնքի զարգացման ծրագիրը իրականացնելու նպատակով կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսվում է համագործակցել պետության, ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների, բարերարների հետ /հավելված 2/:

7. ՀՀԶԾ մոնիթորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով/ հավելված 3/:

Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

8. Եզրափակում

ՀՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը:

ՀՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հավելված

5.2.1. Գծապատկեր 5. Համայնքի զարգացման անմիջական նպատակները